

ՀԵՅ ՏԵՄԵՐԻ ՈՒ ՏՊԱԴՐՈՒԹԵՅՆ ՏՕՆՔ^{*)}

I

Մեզ վիճակւած է այսօր տօնել համագոյին մեծ տօնը, տօն այն վեհ, փառահեղ գործի, որը երկար ու ձիգ դարերի ընթացքում՝ երբեմն դանդաղ, երբեմն էլ արագ, նայած քաղաքական տիրող պայմաններին, քայլել՝ անցել է ու հասել մեզ և որով այժմ ոգևոր ուում ու պարծենում ենք:

Եւ այսպէս, այսօր մենք կանգնած ենք հայ սահերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ միծ, վիթխարի, մինչև այժմ մեր կեանքում չը տեսնըւած տօնի առջև: Յարգել, գնահատել այդ տօնը, նշանակում է միենոյն ժամանակ յարգել ու գնահատել հայ կուլտուրան, առաջխաղացող միտքն ու ստեղծագործող ռահվիրաններին, որոնք անդուլ ջանքեր, եռանդ են թափել ու գործելով տիրող աննպաստ պայմանների մէջ՝ բեժիմների ծանրութեան տակ տնքալով, առանց վհատւելու, շարունակ հայ գիրքն ու տառերը ձեռքերին բռնած՝ ճեղքելով թանձր, խեղղող խաւարը, անցել են առաջ և յոգնած ընկել ու տեղ գրաւել հայկական պանթէօնի մէջ:

Հայ գրի, գրականութեան ու տպագրութեան պատմութիւնը մեզ շատ բան է ասում հայ մատքի մարտիրոսների, տիտանների կրած ծանր օրերի ու զըրկանքների մասին: Եւ հայ խոպան անդաստանը հերկող անխոնջ մշակների չարչարանքների, զրկանքների ու զոհարերութիւնների գնովն է ստեղծել հայկական գրականութիւնն ու կուլտուրան, որոնցով այսօր մուտք ու ընդունելութիւն ենք գտնում քաղա-

^{*)} Այս յօդւածը գրելիս օդաւել ենք Լէօի «Հայ գրի տօնը» աշխատութիւնից:

քակիրթ, յուսաւոր ազգերի ու ժողովուրդների շրջան-ներում...

Ապա ուրեմն մի քիչ թերթենք այդ էջերը:

Խոսրով երրորդի օրով հայ արքունիքում գրագրի պաշտօն էր վարում՝ Տարօն գաւառի Հացեկիաց գիւղից Մեսրոպ անունով մէկը, որը քաջ տիրապետում էր յունարէն, պարսկերէն և ասորաց լեզուներին:

Շուտով Մեսրոպը թողեց այդ պաշտօնը և մտաւ ժողովրդի մէջ քրիստոնէութիւն տարածելու համար, բայց արգելքների շատ հանդիպեց, որովհեաև հայ ժողովուրդը, չէր հասկանում այն լեզուները, որոնցով այդ ժամանակայ կրօնական գրքերն էին գրւած:

Չնայած որ Մեսրոպն այդ գրքերը թարգմանում էր հայերէն, այնուամենայնիւ արդիւնքը բացասական էր լինում: Նա յուսահատած վերազարձաւ էջմիածին ու Սահակ կաթողիկոսի հետ սկսեց մտածել հայ տառեր ստեղծելու մասին...

Ինչպէս արևելքում ապրող շատ ազգեր, նոյնպէս և հայերը մինչև տառերի գիւտը օգտուում էին Բաղդէայում ծնունդ առած գրութեան ձևերից, որոնք կոչւում են մեհենալլուշ (հիէրօգլիք), իսկ քիչ յետոյ Հայաստանում ևս գոյութիւն ունէին սեպածեւ կամ բևեռածեւ գրութիւններ:

Հայոց Վասմշապուհ թագաւորը, որը նոյնպէս սիրում էր գիր և գրականութիւն, յայտնեց Մեսրոպին թէ Միջազգետքում Դանիէլ անունով ասորի եպիսկոպոսի մօտ կան հայերէն տառեր:

Իսկոյն բերել տեին: Բայց այդ տառերը լիրի չէին, Մեսրոպը երկար ժամանակ մտաւանջութեան մէջ էր ընկել, գրա համար սկսեց ճանապարհորդել զանազան երկիրներ՝ պակաս տառերը գտնելու համար: Եւ ահա նա 404—412 թ. այդ պակաս տառերը գտաւ և լրացրեց:

Ու այդ ժամանակ Սահակն ու Մեսրոպ մեծը, լի հաւատով գործի անցան, բաց արին դպրոց և հայ մատաղ սերնդին ծանօթացըին հայ տառերի հետ:

Սկսեցին թարգմանել զանազան կրօնական գըրքեր, որոնք դասագրքերի տեղ էին ծառայում: Եւ այսպիսով Սահակ ու Մեսրոպ հանդիսացան հայ խոպան մտքի անդրանիկ մշակներն ու հերկողները... Նրանք լուսաւոր ջահերը ձեռքերին՝ Հայաստանի վրայով քայլեցին ու ամեն տեղ էլ վառեցին լուսաւորութեան անդրանիկ ճրագները, որոնց լոյսը սկզբներում շատ ազօտ էր, իսկ յետոյ կամաց-կամաց մեծացաւ ու շատացաւ: Եւ Հայաստանի մութ ու խաւար անկիւններում հետզհետէ վառեցին նորանոր կերոնները...

Հայոց գրականութեան հիմնադիրները, հայ առաջին թարգմանիչներն ու ուսուցիչները 40-ական թըւականներին այլևս չը կային: Նրանք յաւիտեան ննջելու էին գնացել, թողնելով ասպարէզը իրենց քաջահմուտ սաներին...

II

Մինչև XV-րդ դարի երկրորդ կէսը գրքերն ամեն տեղ գրւում էին ձեռքով: Պարզ է, որ այդ գըրքերը չէին կարող ամենքին մատչելի լինել նախ արժեքի տեսակէտից և երկրորդ՝ օրինակները սակաւթիւ էին և չէին կարող մանել ժողովրդական լայն խաւերը...

Եւ ահա 1455 թւին, գերմանական Մայնց քաղաքում, Յովհան Գուտտենբերգը, որ մի հասարակ բանւոր էր, հնարեց տպագրութեան գիւտը:

Տպագրութիւնը էժանացրեց գիրքը, մատչելի դարձեց ժողովրդական ամենալայն խաւերին և այսպիսով տպագրւած գրքերը սկսւց տարածւել աշխարհի ամեն կողմերում...

Եւրոպական ազգերը շտապեցին շահագործել տառերի գիւտը և օրըստօրէ լոյս տեսան զանազան գըրքեր, թերթեր, հանդէսներ, ամսաթերթեր ու դասագըրքեր...

Գրքերի միջոցով աշխարհի ամեն անկիւններում էլ մարդկութիւնը ծանօթացաւ փայլուն, վսիմ գաղափարների և շատ ու շատ գեղեցիկ մտքերի հետ... Եւ ժամանակի ընթացքում այդ մտքերն ու գաղափարները շատերի սեփականութիւնն ու կուլտը դարձան:

Այդ պատմական նշանաւոր օրից 57 տարի յետոյ՝ 1512 թւին, Վենետիկի բազմաթիւ տպարաններից մէկում Յակոբ անունով մի հայի հեռուով տպւեց հայերէն անդրանիկ գիրքը, որը կոչւում էր «Պարզատումար»: Այդ գիրքը մի օրացոյց էր,

Հետեւեալ 1513 թւականին նոյն Վենետիկում և նոյն տպարանում տպւեցին 4 հայերէն ուրիշ գրքեր, գրանցից մէկի վրայ գրւած էր հետեւեալ առղերը՝ «Ով որ կարդայք մեղաց թողութիւն խնդրեցէք Աստծոյ» *):

Համարեա կէս դար հայերէն այլես ոչ մի գիրք չը տպւեց: Վենետիկում (1556) Արգար դպիրը (Թիւրքիայի թոքատ բաղաքից) տպեց հայերէն «Սաղմոս» և ապա նա տպարանը տեղափոխեց թիւրքաց մայրաքաղաքը՝ Կ. Փոլիս, այդտեղ, մանաւանդ սկզբանական շրջանում տպագրական գործը կանոնաւոր առաջ ընթացաւ:

Հոռոմում ևս 1584 թւին տպւեց հայերէն «Տոմար Գրիգորեան» անունով մի գիրք: Իսկ երեք տարի յետոյ (1587) Վենետիկում՝ Յովինաննէս Տէրզնցի քահանան տպագրեց մի «Սաղմոսարան»:

Այսպիսով հայերէն առաջին տպագրութիւնը սկսւեց 1512 թւին և համարեա մի դարի ընթացքում տպագրեցին իննը գիրք միայն...

Ինչպէս տեսնում ենք հայ տպագրութիւնը XVI-րդ դարում առաջ շարժւեց՝ շատ դանդաղ քայլերով...

III

XVII և XVIII-րդ դարերում հայ տպագրութեան գործը զարգանալով հանդերձ, սկսեց նաև նորանոր

* Տես Լէօի «Հայ գրքի տօնը» երես 65—66.

«Պատանի» ալմանախ

նւաճումներ անել... Հայկական շատ ու շատ վայրերում բացւեցին բազմաթիւ դպրոցներ ու հիմնեցին զանազան հրատարակչական ընկերութիւններ՝ գլխաւորապէս քարոզչական, միսիօներական նպատակներով:

Հրատարակեցին գրքեր, հանդէսներ, պարբերական թերթեր: Այդ դարերում գործում էին և անհատներ և խմբեր և թէ միութիւններ (*Մխիթարեանները*), որոնք գործում էին տենդոտ ոգևորութեամբ ու մեծ հաւատով:

Ազգի քիչ թէ շատ գիտակից մասը զգում ու հասկանում էր ժամանակի հրամայողական պահանջը և աշխատանք, եռանդ էր թափում՝ հայ գրականութեան ու կուլտարայի զարգացման և առաջինացման համար: Կամաց-կամաց հայ միտքը սկսեց լուսաւորւել ու յառաջադիմել՝ չը նայած քաղաքական մի շարք ձնշումներին ու աննպաստ հանգամանքներին...

Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկայի ու Ամերիկայի հայաբնակ վայրերում բացւում էին տպարաններ. դրանցից շատերը տպագրութեան ու հրատարակչական գործում մեծ ու կարևոր գեր են խաղացել:

Հետևեալ XIX և XX-րդ դարերում արեի տակ, երկրագնդի վրայ հայկական տպարանների մի ցանց էր կազմւած... Ամեն տեղ ուր ապրում էր հայը՝ զգացւում էր տպագրական խօսքի անհրաժեշտութիւնը:

Եւ զաղթական ազգի հետ միասին գաղթում էին նաև հայ տառերն ու տպարանները... Այդ դարերում հայ գրականութիւնը աւելի ծաղկեց. հայ հրապարակախօսութիւնը, բանաստեղծութիւնը, վիպասանութիւնն ու թատերագրութիւնը լայն ծաւալ ընդունեցին:

Հրապարակ իջան մտաւոր ուժեր, տաղանդաւոր գրողներ ու հրապարակախօսներ... Հիմնեցին թերթեր, օրգաններ, ընկերութիւններ կուսակցութիւններ ևայլն Այսպիսով ստեղծւեց հայ գրականութիւնն ու կուլտուրան:


Հայ լուսաւոր մտքի, զբական շարժումների կենտրոնները այժմ հանդիսանում են՝ կ. Պօլիսը, Թիֆլիսը, Եջմիածինը, Վենետիկը, Վիէննան, Մոսկվան, Փարիզը, Ժընեվը և ուրիշ այլ քաքարքները:

Անցեալներում եղել են նաև ուրիշ կենտրոններ, որոնք ժամանակի ընթացքում տեղի են տւել աւելի ուժեղներին: Եւ հայոց գրականութեան պատմութեան մէջ հայ մտքի լուսաւորութեան, վերածնութեան կենտրոններն ու աշխատող, մտաւոր ուժերը տեղ են գրաւում՝ իրենց ցոյց տւած մտաւոր օգուտների համեմատ:

Ահա այսօր այդ խոշոր գործերի գնահատման օրն է... այդ գործերի, աշխատանքների ու ստեղծագործութիւնների շնորհիւ է, որ մենք կուլտուրական աղք կոչւելու հաւակնութիւն ունենք... Ուստի այդ տօնը պիտի համարեի ազգի ինքնագիտակցութեան տօն ու պիտի աշխատել տօնել, որքան կարելի է ճոխ ու փառաւոր, որովհետև նա արժանի է այդ փառքին, մի փառք, որը ստեղծւել է դարերի ընթացքում՝ հարիւրաւոր մտաւոր ուժերի գոհաբերութեամբ:

Դր. Բալասըէկեան

Թիֆլիս



«Զ Ա Խ Օ» — Ահարոննեանի

«Պատանիք»-ի III գլուխկում, Ահարոննեանի պատկերների մասին պարզել եմ իմ տպաւորութիւնները մի քանի խօսքով: Այժմ իւրաքանչյուր պատկերի, առանձին առանձին ոճի, լեզւի, պատկերաւորութեան, նիւթի բնական և անբնականութեան ու այլ կէտերի մասին գրեթէ նոյնը պիտի ասէի: Փոխանակ այդ աւելորդ կրկնութեան, կաշխատեմ պատկերների մէջ արծարծող գաղափարները աւելի պարզ և ընդարձակօրէն գուրս բերել, ինչպէս խոստացել էի և փորձել «Խայը» պատկերում: